ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2017 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

• • •

ՆԱԽԱԲԱՆ

2017 թվականի չորրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) իրականացման աշխատանքներն առավելապես ուղղված են եղել 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով նախնական ուսումնասիրության և ԱՃԹՆ-ի համապատասխանեցման նպատակով ՀՀ օրենքների փոփոխությունների նախագծերի մշակման աշխատանքներին: Օրենսդրական փոփոխությունները միտված են օրենսդրության մեջ ԱՃԹՆ-ի ստանդարտով սահմանված ընդերքօգտագործման ոլորտում տեղեկատվության հրապարակումը որպես պարտադիր պահանջ ամրագրմանը:

Սույն եռամսյակում իրականացվել է նաև ԱՃԹՆ միջազգային քարտուղարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության համար սահմանված պահանջի՝ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակումը: Այն ընդգրկում է 2018-2019 թվականներին իրականացվելիք միջոցառումները, որոնց իրականացման արդյունքում 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրությանը հասանելի կլինեն ՀՀ մետական հանքավայրերի իրական սեփականատերերի անունները: Այս աշխատանքների շրջանակներում ԲՇԽ-ի անդամներն ու խորհրդատուներն անցկացրել են մի շարք հանդիպումներ վերհանված հարցերի պարզաբանման, իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման և օրենսդրական փոփոխությունների քննարկման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում տարվել է նաև արդյունավետ աշխատանք դոնոր կազմակերպությունների հետ: ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացին իրենց աջակցությունն են ցուցաբերում Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատունը, Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչությունն ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ): Շարունակվել է համագործակցությունը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ: Իրականացվել են Համաշխարհային բանկի՝ Հայաստանի ԱՃԹՆ-ին աջակցության դրամաշնորհի համապատասխան փաստաթղթերի մշակման աշխատանքեր:

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2018թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի 2017-2018ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՆՊԱՏԱԿԸ	**Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 1. ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի տեխնիկական առաջադրանքի մշակում, կազմակերպության ընտրության մրցույթի անցկացում, կազմակերպության հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ տեխնիկական առաջադրանք (մայիս, 2017), պայմանագիր կազմակերպության հետ *Վերջնաժամկետը՝* 2017թ. հոկտեմբեր	Ընթացիկ (մշակվել և հաստատվել է կայքի տեխնիկական առաջադրանքը և 2017 թ. դեկտեմբերին հայտարարվել է մրցույթ)	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	Միջոցառման իրականացմանը ուշացումը պայմանավորված է միջոցառման իրականացմանն աջակցող միջազգային կազմակերպության կողմից ներքին ֆինանսական վերաբաշխումների անհրաժեշտությամբ, ծրագրի հաստատման և համապատասխան ընթացակարգերի ապահովման ժամկետներով:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 4. ԱՃԹՆ-ի կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ կայքում հրապարակված հաշվետվություններ, տեսագրությունների, արձանագրություններ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 5. Հանքարդյունաբերության	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում	*Արդյունքները՝* տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի հաշվետվություն, ԲՇԽ-ի տարեկան հաշվետվություն, տեղեկատվական տեսահոլովակներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 7. Հաղորդակցության ռազմավարության[1] մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ հաղորդակցության ռազմավարության նախագիծ *Վերջնաժամկետը՝* 2017թ. մայիս	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն	Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունա-բերության կենտրոնը (ՀԱՀ ՊՀԿ) համապատասխան տեխնիկական առաջադրանքում սահմանված ժամկետներում չի ներկայացրել նախագիծը:

[1] Հեռահաղորդակցության ռազմավարությունը 2017 թ. մայիսի 5-ի նիստի ընթացքում վերանվանել է «Հանրային հաղորդակցության ռազմավարության»:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 8. Հաղորդակցության ռազմավարության հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ հաղորդակցության ռազմավարություն *Վերջնաժամկետը՝* 2017թ. հունիս	Չի իրականացվել	ԲՇԽ	ՀԱՀ ՊՀԿ-ը համապատասխան տեխնիկական առաջադրանքում սահմանված ժամկետներում չի ներկայացրել նախագիծը:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ կլոր սեղաններ, հանդիպումներ, այդ թվում ազդակիր համայնքների ներկայացուցիչների հետ, հանդիպումներ կրթական հաստատությունների հետ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
Միջոցառում N 1. ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի տեխնիկական առաջադրանքի մշակում, կազմակերպության ընտրության մրցույթի անցկացում, կազմակերպության հաստատում				
Հայատանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակում նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի ստեղծման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցում: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԿԱ (կառավարության աշխատակազմի) ԱՃԹՆ-ի պատասխանատուների կողմից վերջնականացվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է ԱՃԹՆ-ի կայքի տեխնիկական առաջադրանքը: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության կողմից կայքի մշակումն իրականացնող ընկերության ընտրության համար մրցույթ է հայտարարվել:				
Միջոցառում 4. ԱՃԹՆ-ի կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների,				

տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջը [2] հաշվետու ժամանակահատվածում մշտապես թարմացվել է, ներկայացվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն հայերեն և անգլերեն լեզուներով:

Միջոցառում 5. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում

Իրազեկման բարձրացման միջոցառումների շրջանակում սոցիալական հոլովակների պատրաստման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում «Ալտերա» ՍՊԸ-ն պատրաստել է վեց տեսահոլովակ: Հոլովակները տարածվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջում (Ինչ է ԱՃԹՆ-ն[3], Հանքարդյունաբերության դերը ՀՀ տնտեսությունում[4], Բազմաշահառու խումբ[5], Իրական սեփականատերեր[6], ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացը[7], կարճ տեսաֆիլմ՝ ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրի և Հանրապետական երկրաբանական ֆոնդի www.geofund.am կայքի ու կայքից օգտվելու ուղեցույցի վերաբերյալ[8]) և Հայաստանի ԱՃԹՆ-ի յութուբյան էջում (Ինչ է ԱՃԹՆ-ն[9], Հանքարդյունաբերության դերը ՀՀ տնտեսությունում[10], Բազմաշահառու խումբ[11], Իրական սեփականատերեր[12], ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացը[13], կարճ տեսաֆիլմ[14]):

Ֆեյսբուքյան գովազդային արշավի ընթացքում խթանվել են 5 հոլովակներն ու ֆիլմը խթանվել են ավելի մեծ դիտողականություն ապահովելու համար: Յուրաքանչյուր հոլովակի համար արշավը տևել է մեկ շաբաթ (բացառությամբ 1 հոլովակի և ֆիլմի, որոնց գովազդային բյուջեն և իրականացման ժամկետները բաշխվել են հավասարապես 2 հոլովակի միջև): Արշավի արդյունքում հոլովակների և ֆիլմի դիտումների քանակը հասել է շուրջ 155 000-ի. ֆիլմը դիտվել է շուրջ 59 000 անգամ, իսկ հոլովակները՝ միջինում՝ 19 000:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 5 հոլովակի և կարճ ֆիլմի տարածումը Կապանի «Սոսի» և Լոռու մարզի «Ֆորտունա» հեռուստաընկերություններով: 5 հոլովակներից յուրաքանչյուրը եթեր է հեռարձակվել 4 անգամ յուրաքանչյուր հեռուստաընկերությամբ: Ֆիլմը եթեր է հեռարձակվել 1 անգամ «Ֆորտունա» հեռուստաընկերությամբ:

Իրականացվել է նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջի խթանում: Ֆեյսբուքյան էջի գովազդային արշավը տևել է երկու ամիս: Արշավի արդյունքում ֆեյսբուքյան էջի հավանությունների (like) քանակը ավելացել է շուրջ 1500-ով՝ հասնելով 1900 հավանության:

Միջոցառում 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և

[2] http://gov.am/am/eiti/
[3] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2108693685822912/
[4] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2120102438015370/
[5] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2141558569203090/
[6] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2130584020300545/
[7] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2158475167511430/
[8] https://www.facebook.com/EITIArmenia/videos/2147564658602481/
[9] https://youtu.be/vTMQnGs9P9k
[10] https://youtu.be/1si8VSxB2R4
[11] https://youtu.be/zoEQ1GiYuxo
[12] https://youtu.be/RL-DrQDNrv0
[13] https://youtu.be/Q2RLKSn6AZk
[14] https://youtu.be/m-Q5WTgcZfM

լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով

Շարունակվել են պարբերաբար թարմացվել Facebook[15], YouTube[16] և Twitter[17] ցանցերում ստեղծված Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվում է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելությունը լայն հանրության համար:

Միջոցառում 7. Հաղորդակցության ռազմավարության մշակում

Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ը իրականացնում է հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքները: Ռազմավարության մշակման աշխատանքների շրջանակներում ՀԱՀ ՊՀԿ-ի փորձագետները հանդիպել են հանրային հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խմբի անդամներին (հուլիսի 24-ին): Համաձայն հաստատված ժամանակացույցի՝ հանրային հաղորդակցության ռազմավարության վերջնական փաստաթուղթը պետք է ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ին ներկայացվեր 2017թ. օգոստոսին, սակայն հաշվետու ժամանակաշրջանում այն չի ներկայացնել:

Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի դեկտեմբերի 6-ին կայացած նիստի ընթացքում նախագծի ներկայացման նոր վերջնաժամկետ էր սահմանվել դեկտեմբերի 19-ը[18] (արձանագրության 7-րդ կետ), սակայն հաշվետու ժամանակահատվածում այն չի ներկայացվել:

Միջոցառում 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում

Իրազեկության բարձրացման միջոցառումների շրջանակներում իրականացվել է 5 հոլովակների և 1 ֆիլմի ֆեյսբուքյան գովազդային արշավ, ինչպես նաև խթանվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի ֆեյսբուքյան էջի խթանում: Տես՝ 5-րդ միջոցառում:

ՆՊԱՏԱԿԸ	**Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 11. Իրական	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

[15] https://www.facebook.com/EITIArmenia/
[16] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[17] https://twitter.com/EITI_Armenia
[18] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_12_06_%202017.pdf

սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում	*Արդյունքը*՝ Ճանապարհային քարտեզի նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հունիս	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով:	ԲՇԽ,ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ	Աշխատանքային ծրագրով նախատեսված 11-14-րդ միջոցառումների իրականացվել է ուշացումով, ինչը պայմավորված է դոնոր կազմակերպության՝ ՎԶԵԲ-ի կողմից ներկայացված ժամանակացույցով և ընթացակարգերով:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 12. Ճանապարհային քարտեզի նախագծի հանրային քննարկումներ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ճանապարհային քարտեզի նախագծի հրապարակում, հանդիպումներ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հուլիս	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով:	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	12-14-րդ միջոցառումները տրամաբանական շղթա են ներկայացնում, 11-րդ միջոցառման ուշացման պատճառով հետաձգվել են նաև հաջորդող՝ 12-14-րդ միջոցառումների իրականացման ժամկետները:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 13. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. օգոստոս	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով: Պահպանվել է ԱՃԹՆ-ի խորհրդով սահմանված վերջնաժամկետը:	ԲՇԽ	Տես 12-րդ միջոցառման նշումները:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 14. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի ներկայացում ԱՃԹՆ քարտուղարություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն ներկայացված ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. սեպտեմբեր	Իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում՝ աշխատանքային ծրագրով հաստատված ժամկետից ուշացումով: Պահպանվել է ԱՃԹՆ-ի խորհրդով սահմանված վերջնաժամկետը:	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն	Տես 12-րդ միջոցառման նշումները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում N 11. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ համագործակցության շրջանակներում ՎԶԵԲ-ի լոնդոնյան գրասենյակի կողմից տեխնիկական աջակցություն է ցուցաբերվում ԱՃԹՆ-ի անդամ մի շարք երկրներում, այդ թվում Հայաստանում՝ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներին, մասնավորապես, իրական սեփականատերերի բացահայտման հարցերով խորհրդատու (խորհրդատուներ) ներգրավելու միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում խորհրդատուների կողմից մշակվել և ԲՇԽ-ին է ներկայացվել իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի նախագիծը և Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն (որը ներառում է իրական սեփականատիրոջ սահմանման առաջարկություն):

Միջոցառում 12. Ճանապարհային քարտեզի նախագծի հանրային քննարկումներ

ՎԶԵԲ-ի կողմից ներկայացված ժամանակացույցով նախատեսված էր, որ ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներում ներգրավված փորձագետը (փորձագետները) ճանապարհային քարտեզի մշակման ընթացքում կիրականացնի (կիրականացնեն) հանրային քննարկումներ՝ ընդգրկելով տարբեր շահագրգիռ կողմերի՝ համաձայն իր կողմից մշակված շահառուների (ներգրավելով ոչ միայն ԲՇԽ-ի անդամներին) ցանկի: Փորձագետները մի շարք հանդիպումներ են ունեցել ԲՇԽ-ի անդամների, հանքարդյունաբերողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Քննարկումների արդյունքները ներառվել են ճանապարհային քարտեզի նախագծում: Ժամանակային սահմանափակումների պատճառով հանրության ավելի լայն շերտերի մասնակցությամբ քննարկումները կիրականացվեն՝ ըստ ճանապարհային քարտեզով սահմանված ժամանակացույցի:

Միջոցառում 13. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի հաստատում

ԱՃԹՆ ԲՇԽ-ի բոլոր երեք խմբակցությունները էլեկտրոնային եղանակով տվել են իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի հաստատման վերաբերյալ իրենց համաձայնությունները: ԲՇԽ-ի հանքարդյունահանող ընկերությունների խմբակցությունն իր համաձայնությունը տվել է որոշակի վերապահումով: Մասնավորապես, էլեկտրոնային եղանակով համաձայնության թերթիկում նշվել է՝ «հաշվի առնելով, որ նախագծում տրված սահմանումները և ձևակերպումները լրամշակման (որոշակիացման, հստակեցման, խմբագրման) կարիք ունեն՝ նախագծում տրված ձևակերպումները համարում ենք նախնական, հայեցակարգային և անհրաժեշտ ենք համարում դրանց անդրադառնալ լրացուցիչ՝ համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակման փուլում»:

Միջոցառում 14. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի ներկայացում ԱՃԹՆ քարտուղարություն

Հաշվետու ժամանակահատվածում իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը, ԲՇԽ-ի կողմից հաստատվելուց հետո, հրապարակվել է ԱՃԹՆ-ի կայքէջում[19] և ներկայացվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն:

ՆՊԱՏԱԿԸ	**ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 16. Օրենսդրության ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ հաշվետվություն, գործողությունների պլան *Վերջնաժամկետը*՝ 2017թ. դեկտեմբեր	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն, փորձագետ	Մշակվել է ԱՃԹՆ-ի համապատաս-խանեցման շրջանակներում օրենսդրական փոփոխությունների նախագիծ:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 17. Հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին *Վերջնաժամկետը*՝ 2017թ. դեկտեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, փորձագետ	ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունը չի ներկայացվել համաձայն ժամանակացույցի:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 18. ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

[19] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/BO%20roadmap_draft_ARM.pdf

գործողությունների պլանի քննարկում և հաստատում	*Արդյունքը*՝ ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և գործողությունների պլանի քննարկում և հաստատում *Վերջնաժամկետը*՝ 2017թ. դեկտեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	Տես՝ 17-րդ միջոցառման նշումներ:
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
Միջոցառում 16. Օրենսդրության ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում Հաշվետու ժամանակահատվածում ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի համապատասխանեցման շրջանակներում օրենսդրական փոփոխությունների նախագիծ[20]: Առաջարկվող փոփոխություններն ուղղված են ԱՃԹՆ-ի ստանդարտով սահմանված ընդերքօգտագործման ոլորտի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ապահովմանը, ինչի շնորհիվ ոլորտը ավելի թափանցիկ ու հաշվետվողական կդառնա՝ խթանելով մրցակցային կառավարումն ու վերահսկողությունը: Օրենսդրական փաթեթի մշակման ընթացքում կայացել են մի շարք հանդիպումներ ԲՇԽ-ի անդամների և ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի պատասխանատուների հետ: Փաթեթի մշակման աշխատանքներում ակտիվորեն ներգրավված են եղել նաև շահագրգիռ պետական մարմինները: *Միջոցառում 17. Հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին* *Միջոցառում 18. ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և գործողությունների պլանի քննարկում և հաստատում* Հաշվետու ժամանակահատվածում ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրությունը չի ներկայացվել (ըստ ժամանակացույցի՝ առաջին նախագիծը պետք է ներկայացվեր հոկտեմբերի 13-ին): Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի դեկտեմբերի 6-ին կայացած նիստի ընթացքում ՀԱՀ ՊՀԿ-ի փորձագետները խոստացել էին նախագիծը ուղարկել դեկտեմբերի 11-ին[21] (արձանագրության 7-րդ կետ), սակայն հաշվետու ժամանակահատվածում, այն չի ներկայացվել:				

ՆՊԱՏԱԿԸ	**Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն և ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզի մշակում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 19. Տեխնիկական	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

[20] https://www.e-draft.am/projects/602
[21] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_12_06_%202017.pdf

առաջադրանքի մշակում և հաստատում	*Արդյունքը՝* տեխնիկական առաջադրանք *Վերջնաժամկետը՝* 2017թ. հոկտեմբեր	Մասամբ իրականացվել է, քանի որ ՀԱՀ ՊՀԿ-ի ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի համապատասխան հատվածը այս միջոցառմանն էր ուղղված:	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	Պատասխանատու հանքարդյունաբերության որոշ տարրեր որոշվել է ներառել ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից մշակվող ուսումնասիրություններում, որից հետո դրանք կլրամշակվեն ԲՇԽ-ի կողմից:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 20. Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը՝* 2017թ. նոյեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	Տես՝ 20-րդ միջոցառման նշումները:
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
Միջոցառում 19. Տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում *Միջոցառում 20. Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով* Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ն օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ ուսումնասիրության շրջանակներում քննելու է պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման տարրեր: Մասնավորապես, քննարկվելու են կոնկրետ բարեփոխումներ, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ձևավորման վրա: Մշակվելու է պատասխանատու հանքարդյունաբերության նախնական ճանապարհային քարտեզը, որից հետո ԲՇԽ-ն, մասնավորապես՝ ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խումբը ձեռնամուխ կլինի պատասխանատու հանքարդյունաբերության համապարփակ ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներին:				

ՆՊԱՏԱԿԸ	**Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ դոնոր կազմակերպությունների հետ հանդիպում *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 40.	**Արդյունքը և**	**Իրականացման**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հիմնում և աշխատանքների ընթացք	**վերջնաժամկետը**	**կարգավիճակը**		
	Արդյունքը՝ Հայաստանի ԱՃԹՆ քարտուղարություն *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հոկտեմբեր	Իրականացվել է	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, կիսամյակային, տարեկան)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ հաշվետվություններ *Վերջնաժամկետը*՝ եռամսյակը մեկ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 44. Մասնակցություն ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսների	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	Մասնակցություն Ջակարտայում կայացած՝ իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ կոնֆերանսին:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 45. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի անցկացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստեր *Վերջնաժամկետը*՝	Իրականացվել է	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն,	Անցկացվել են ԲՇԽ-ի 3 նիստեր:

	եռամսյակը մեկ		ԲՇԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 47. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 49. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ 2017թ. դեկտեմբեր			Նախատեսվել է ՀՀ 2018թ. պետական բյուջեի մասին օրենքով[22]:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում N 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն

ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները հանդիպումներ են ունեցել գործընկեր միջազգային կազմակերպությունների, մասնավորապես, Հայաստանում Բրիտանական դեսպանատան, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Համաշխարհային բանկի և Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքներին միջազգային կազմակերպությունների մասնակցության հնարավոր ուղղությունները: Հաշվետու ժամանակահատվածում կազմվել են Համաշխարհային բանկի դրամաշնորհային հայտադիմումից բխող ծրագրային և ֆինանսական փաստաթղթերը: Բացի այդ, Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցչության կողմից հայտարարվել է մրցույթ Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը ստեղծելու համար ընկերություն ընտրելու համար:

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ համագործակցության շրջանակում ՎՀԵԲ-ի ԱՃԹՆ-ի իրական սեփականատերերի բացահայտման օժանդակության ծրագրով հաշվետու ժամանակահատվածում խորհրդատուների կողմից մշակվել է իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի նախագիծը և Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն:

Միջոցառում N 40. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հիմնում և աշխատանքների ընթացք

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախորդ եռամսյակում կազմված բյուջետային հայտի լրամշակման աշխատանքներ: Ներկայացված հայտով նախատեսվում է վճարել ՀՀ ԿԱ ԱՃԹՆ-ի պատասխանատուների (ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարություն) աշխատավարձը և ԱՃԹՆ-ի տարեկան անդամավճարը:

Միջոցառում N 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, կիսամյակային, տարեկան)

[22] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118144

Հաշվետու ժամանակահատվածում (հոկտեմբերի 10-ին և 17-ին) տեղի են ունեցել ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստեր, որոնց ժամանակ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամները և խորհրդատուները քննարկել են Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի նախնական ուսումնասիրության նախագծի վերաբերյալ մի շարք հարցեր: Կազմվել, հաստատվել և հրապարակվել են ԲՇԽ-ի նիստերի արձանագրությունները[23,24]:

Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում կայացել է ԱՃԹՆ ԲՇԽ-ի մեկ այլ նիստ (նոյեմբերի 24-ին), որի ընթացքում ԲՇԽ-ի անդամները և խորհրդատուները քննարկել են ՀՀ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը, որն ավելի ուշ հաստատվել է ԲՇԽ-ի կողմից[25]: Մշակվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի բաց տվյալների քաղաքականության հայեցակարգը[26]: Կազմվել, հաստատվել և հրապարակվել են ԲՇԽ-ի նիստի արձանագրությունը[27] և ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2017թ. 3-րդ եռամսյակի հաշվետվությունը[28]:

Միջոցառում 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության աշխատակազմի ԱՃԹՆ-ի պատասխանատուները համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման և ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացման հետ կապված մեկնաբանությունների և խորհրդատվության ստացման նպատակով: Կազմակերպվել են կոնֆերանս զանգեր, իրականացվել է նամակագրություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ: Հաշվետու ժամանակահատվածում (հոկտեմբերի 2-ին) ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից կազմակերպվել է վեբինար ԲՇԽ-ի տարբեր խմբակցությունների ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքներում արդյունավետ ներգրավվածությանը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի ներդրման գործելակերպերի ազգային առանձնահատկությունների քննարկման նպատակով:

ՀՀ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման ընթացքում նամակագրության միջոցով փորձի փոխանակում է իրականավել Միացյալ Թագավորության ԻՍ ռեգիստրի համակարգող մարմնի՝ Բիզնեսի, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության դեպարտամենտի ղեկավարության, Ղազախստանի և Ուկրաինայի ԲՇԽ անդամների հետ:

Միջոցառում 44. Մասնակցություն ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսների

Հաշվետու ժամանակահատվածում (հոկտեմբերի 23-24-ին) ՀՀ պատվիրակությունը մասնակցել է ԱՃԹՆ-ի՝ «Իրական սեփականատերերի թափանցիկությունը» խորագրով կոնֆերանսին, որը կայացել է Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտայում: Կոնֆերանսին ներկայացվել է հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերի բացահայտման լավագույն փորձը, քննարկվել են մարտահրավերները, ինչպես նաև ԱՃԹՆ-ի անդամ երկրների պատվիրակությունները փոխանակել են կուտակված փորձը:

Միջոցառում 47. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի ձևավորում

Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության մի շարք

[23] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_10_10_%202017.pdf
[24] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_17_10_%202017.pdf
[25] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/BO%20roadmap_draft_ARM.pdf
[26] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/EITI_Open_Data_Policy_Armenia_arm.pdf
[27] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_meeting_minute_12_06_%202017.pdf
[28] http://www.gov.am/u_files/file/ardyunaberakan-cragir/MSG_Quarterly_progress_report_draft_July-September.pdf

հարցերի լուսաբանմանը (հոկտեմբերի 10-ին և 17-ին), իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի մշակմանը (հոկտեմբերի 13-ին՝ իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խմբի մասնակցությամբ, և նոյեմբերի 24-ին) և ԱՃԹՆ-ի համապատասխանեցման շրջանակներում անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններին (նոյեմբերի 8-ին և 9-ին) վերաբերող հանդիպումներ:

Միջոցառում 49. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում

Տես՝ 40-րդ միջոցառումը:

ՆՊԱՏԱԿԸ	**ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվություն**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 50. ԱՃԹՆ զեկույցի նախնական ուսումնասիրություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ նախնական ուսումնասիրություն	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 51. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. հուլիս	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ	ՀԱՀ ՊՀԿ-ը համապատասխան տեխնիկական առաջադրանքում սահմանված ժամկետներում չի ներկայացրել նախագիծը:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 52. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագծի քննարկում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանք *Վերջնաժամկետը*՝ 2017թ. օգոստոս	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն	Միջոցառման չկատարումը պայմանավորված է նախորդ միջոցառման (51-րդ միջոցառում) չիրականացմամբ:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 53. Անկախ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում) և ԱՃԹՆ հաշվետվության մշակում	*Արդյունքները*՝ անկախ ադմինիստրատորի մրցույթի հայտարարություն, մրցույթ, անկախ ադմինիստրատորի հետ կնքված պայմանագիր, ԱՃԹՆ հաշվետվության նախագիծ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. օգոստոս - 2018թ. հուլիս	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, անկախ ադմինիստրատոր	Միջոցառման չկատարումը պայմանավորված է նախորդ միջոցառումների (51-րդ և 52-րդ միջոցառումներ) չիրականացմամբ:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 54. ԲՇԽ-ի կողմից հաշվետվություն ներկայացնող պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ցանկի կազմում և հաստատում, էականության սահմանում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ հաշվետվություն ներկայացնող պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ցանկ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. նոյեմբեր	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ	Ցանկը պետք է կազմվի, իսկ էականություններն էլ սահմանվեն 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության շրջանակներում:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 55. Պետական գերատեսչությունների և արդյունահանող կազմակերպությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ձևաչափի և հաշվետվությունների ներկայացման ժամկետի մշակում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ հաշվետվությունների ձևաչափ *Վերջնաժամկետը*՝ 2017թ. նոյեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ	Միջոցառումը պետք է իրագործվի ԱՃԹՆ-ին համապատասխանեցման օրենսդրական փոփոխությունների ընդունումից և 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության՝ ԲՇԽ-ի կողմից հաստատելուց հետո:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 56. ԱՃԹՆ զեկույցի համար	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

ներկայացվող հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ ուսուցում պետական գերատեսչություններ և արդյունահանող կազմակերպությունների համար	*Արդյունքը*՝ ուսուցում *Վերջնաժամկետը*՝ 2017թ. դեկտեմբեր	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ, անկախ ադմինիստրատոր	Միջոցառումը պետք է իրագործվի 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության՝ ԲՇԽ-ի կողմից հաստատելուց, ԱՃԹՆ-ին համապատաս-խանեցման օրենսդրական փոփոխությունների ընդունումից և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակումից հետո:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 57. Հաշվետվությունների ներկայացման իրավական հիմքերի անհրաժեշտության քննարկում կառավարության հետ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ քննարկում *Վերջնաժամկետը*՝ 2017թ. նոյեմբեր	Ընթացիկ	ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	Հաշվետվությունների ներկայացման իրավական հիմքերի անհրաժեշտությունը քննարկվել է պետական գերատեսչությունների հետ՝ ԱՃԹՆ-ին համապատաս-խանեցման օրենսդրական փոփոխությունների մշակման ընթացքում: ԱՃԹՆ-ին համապատաս-խանեցման օրենսդրական փոփոխությունները մշակվել են ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 59. Թարգմանչական	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

աշխատանքներ	*Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ		Կատարվել են ընթացիկ թարգմանչական աշխատանքներ:
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
Միջոցառում N 50. ԱՃԹՆ զեկույցի նախնական ուսումնասիրություն Հայաստանում ՄԹ դեսպանատան ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ն իրականացնում է զեկույցի նախնական ուսումնասիրության աշխատանքները: Դեկտեմբերի 20-ին ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է նախնական ուսումնասիրության լրամշակված նախագիծը, որն ուղարկվել է ԲՇԽ-ի անդամներին՝ կարծիքների և առաջարկությունների համար: *Միջոցառում 51. Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակում* Հայաստանում ՄԹ ֆինանսավորմամբ ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրում ներառված է անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի մշակումը, որը չի ներկայացվել ժամանակացույցով սահմանված ժամկետներում (ըստ ժամանակացույցի՝ պետք է ներկայացվեր հոկտեմբերի 16-ին):				